574

1. Գերի էի մեղքին, կորսված էր իմ հոգին,
Չունեի իմ սրտում ուրախություն,
Քրիստոսը գտավ ինձ մի օր երանելի,
Եվ փոխվեց կյանքն իմ ամբողջովին:

Առաջնորդի՛ր ինձ, Տեր Դու,
Եվ իմ սիրտը Դու լցրո՛ւ
Կյանք տվող, ջերմացնող Քո սիրով,
Որ Քո շնորհն իմ մեջ գործի,
Փրկության մարդկանց բերի,
Դեպի տունն երկնային առաջնորդի:

2. Փորձեցի իմ կյանքում գտնել ուրախություն,
Գտնել գեթ մի ընկեր, որն ինձ սիրեր,
Եվ գտա Հիսուսին ընկեր ինձ մտերիմ,
Որն ինձ ամենուր կմխիթարի:

3. Հիմա ղեկն իմ կյանքի ձեռքին է Հիսուսի,
Ինձ առաջնորդում է Տերն իմ բարի,
Տերն է ինձ հետ խոսում, սիրով ինձ հորդորում,
Դեպի հանդարտ ջրերն առաջնորդում:

4. Իմ ընկեր, ինձ լսի՛ր, Տիրոջը մի՛ մերժիր,
Սիրում է Հիսուսը քեզ, մի՛ մոռացիր,
Նա կմխիթարի և սիրտդ կլցնի
Իր ուրախությունով անպատմելի: